26141

8 կ. | ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԵՐԻԱ | № 3

334.5(47.925)
Հ-24

1920 թ. 29 ՆՈՅԵՄԲԵՐ 1929 թ.

# ՍՊԱՌԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ 9 ՏԱՐՈՒՄ ՅԵՎ ՆՐԱ ՀՆԳԱՄՅԱԿԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ „ՀԱՅԿՈՈՊԻ“
ՅԵՐԵՎԱՆ — 1929

17 FEB 2010

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք.

34.5(47.925)
Հ-24

Հ. Ս. Խ. Հ.

# ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ 9 ՏԱՐՈՒՄ ՅԵՎ ՆՐԱ ՀՆԳԱՄՅԱԿԸ

(Հայաստանի խորհրդայնացման 9-րդ տարեդարձի առթիվ)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ «ՀԱՅԿՈՈՊԻ»
ՅԵՐԵՎԱՆ — 1929

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ Յ.Ն.վան Публичная Б...
14944-57

18.02.2014

26141

ՏՊԱՐԱՆ ՀԵՐՄԵՍ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ,
ՄԱՐՔՍԻ ՓՈՂ. № 29
ԳՐԱՌԵՊ. № 2892բ.
ՏԻՐԱԺ 10,000

## 1. ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԱՆՑՅԱԼԻՑ

Սառողա՛կան կոոպերացիայի կազմակերպությունները ինչպես հայտնի յե գոյություն են ունեցել նաև դաշնակցական կառավարության ժամանակ և դրանից ել առաջ, այնպես, ինչպես այժմս ել բուրժուական յերկրներում կան զանազան կոոպերատիվ միություններ։ Սակայն ինչ եր իրենից ներկայացնում Սպառողական Կոոպերացիան և նրա կենտրոն Հայկոոպը՝ դաշնակների օրոք, յեթե վոչ մասնավոր առևտրին և սպեկուլիացիային զարկ տվող, նրան օգնող մի կազմակերպություն, վորը ձևականորեն իրեն հայտարարելով չեզոք՝ քաղաքական—դասակարգային պայքարի խնդիրներից, իրականում հանդիսանում եր դաշնակցական հակահեղափոխական կառավարության հավելվածը, նրա կամակատարը։ Այդ կառավարության ձեռքին նա ծառայել է հակահեղափոխական և ազգային նպատակներով, կազմակերպել ու տարել է առևտրա-մատակարարող ֆունկցիաներ՝ այդ նպատակների իրագործման համար, վորով նա ակտիվ կերպով մասնակցել է ու աջակցել Դաշնակցական բուրժուական կառավարության հակահեղափոխական աշխատանքներին։

Այսպիսով մինչև Հայաստանի խորհրդայնացումը գոյություն ունեցող սպառողական կոոպերացիան ունեցել ե բուրժուական դեմք, ազգայնական ձգտումներ և մասնավոր առևտուրը խրախուսող նպատակներ, վորոնք յերբեք չեն յեղել Հայաստանի բանվորների և աշխատավոր գյուղացիների պահանջները։ Այդ ե պատճառը, վոր նա չի յեղել Հայաստանի բանվորների ու գյուղացիների լայն մասսայական կազմակերպությունը, ինչպիսին նա այսոր ե, զուրկ ե յեղել նրանց ոգնությունից, և ընդհակառակը, դաշնակների թելադրանքով գործել ե այդ մասսաների տնտեսական-քաղաքական շահերին հակառակ։ Իր շարքերում ընդգրկած մոտ 100 հազար անդամներից, խոշոր մասը յեղել են ունեվորներ, կուլակներ, առևտրականներ, չարչիներ և այլն, վորոնց շահերի համար ել աշխատում եր կոոպերացիան։ Վերջինիս գործերը վարում եյին դաշնակցական և զանազան «ազգային գործիչներ», վորոնց աշխատանքները վոչ մի կապ չունեին մասսաների հետ։

Դաշնակցական կոոպերացիայի տնտեսական բազան յեղել ե Զանգիբասարի, Բոյուքվեդիի և այլ շրջանների թալանը և դեսից-դենից աշխատավոր գյուղացիներից հավաքած իրերը, մանավանդ՝ թուրքական գյուղերից «քաջաբար» յուրացված նրանց ունեցվածքը, վորը կոոպերացիայի միջոցով գնում եր դաշնակցական մինիստրների ու պարլամենտի անդամների անձնական կարիքների բավարարմանը։ Բացի սրանից, յերկրի տնտեսական կյանքում կոոպերացիան չի խաղացել և վոչ մի դեր, վորովհետև դաշնակցական Հայաստանում առհասարակ չի յեղել վոչ մի շինարարու-



թյուն։ Այդ շրջանում ինչպիսին ճիշտ կերպով գրել ե 1927 թվին ընկ. Գ. Պիճիկյանն իր «Պատմություն Հայաստանի սպառողական կոոպերացիայի» գրքույկում, «Հայաստանի տնտեսական կյանքի քայքայման ու այլասերման զուգընթաց, գնում եր նաև կոոպերացիայի այլասերման ու քայքայման պրոցեսը»։ Այսպիսով կոոպերացիան մի չափանիշ եր, վորը ցույց եր տալիս դաշնակցական պետության կործանիչ աշխատանքը Հայաստանում, վորը հասցրեց նրան մինչև սնանկության, քայքայման, վորին և վերջ տրվեց Հայաստանի խորհրդայնացումով՝ 1920 թվի նոյեմբերի 29-ին։

## 2. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ ՅԵՎ ՆՐԱ ՎԵՐԵԼՔԻ ՏԱՐԻՆԵՐԸ.

Հայաստանում Խորհրդային իշխանություն հաստատվելուց հետո, նախկին դաշնակցական Հայկոոպից վորպես ժառանգություն մնացել ե միայն նրա քայքայված ապարատը։ Սակայն խորհրդայնացման առաջին իսկ որից սկսած, սպառողական կոոպերացիան հիմնովին վերակազմակերպվեց, վերափոխվեց թե իր առաջ դրված խնդիրներով և թե իր կազմով։ Նրա ղեկավարությունն անցավ կոմկուսի ձեռքը, Խ. իշխանությունն սկսեց ոգնել սպառկոոպերացիային՝ կազմակերպչորեն վերակազմակերպվելու և աշխատանքի լծվելու համար։ Շնորհիվ այս ջերմ աջակցության, սպառողական կոոպերացիան կարողացավ շատ շուտով վոտքի կանգնել և սկսեց աշխատել վորպես խորհրդային սպառողական կոոպերացիա

Խորհրդային Հայաստանի տնտեսական զարգացման առաջին, և ռազմական կոմունիզմի շրջանում, կոոպերացիան չէր կարող գոյություն ունենալ այլ կերպ, քան որպես պետական իշխանության ձեռքում մթերաբաշխ մի ապարատ։ Նա կորցրեց իր առևտրական ֆունկցիաները, որովհետև ռազմական կոմունիզմի շրջանում չէր կարող լինել այդպիսին։ 1921 թ. հունիս ամսից սկսած կոոպերացիան թևակոխում է մի նոր շրջան, որը սկսվում է նոր տնտեսական քաղաքականության կիրառումից։

Այս շրջանում նույնպես սպառողական կոոպերացիան յենթարկվում է կազմակերպչական հիմնական վերակազմության, այն իմաստով, որ նա զուտ պետական բաշխիչ օրգան լինելուց (ռազմ. կոմունիզմի շրջանում) վերածվում է մի մասսայական-տնտեսական կազմակերպության։ Պետության կողմից հրատարակվում է նոր դեկրետ, որով որոշվում է կոոպերացիայի դերը և անելիքները նոր տնտեսական քաղաքականության շրջանում։

Կոոպերացիան սկսում է անդամագրել և իր շուրջը համախմբել մեր բանվորական ու գյուղացիական մասսաներին, կազմակերպում է առևտուրը, վերընտրում և թարմացնում է իր օրգանները, պետությունը տալիս է ֆինանսական մեծ օգնություն։

Հենց այդ յերկրորդ շրջանումն է, որ լույս է տեսնում ընկ. Լենինի հայտնի հոդվածը՝ «Կոոպերացիայի մասին», որով նոր թափ է ներշնչում կոոպերատիվ աշխատանքին։ Սկսած այդ ժամանակից, խորհրդային կոոպերացիան թևակոխում է իր զարգացման ամենահիմնական շրջանը։ Մեր տնտեսության ընդհա-



նուր վերելքին զուգընթաց, Հայաստանի խորհրդայնացման այս 9-ը տարիներին աճել ու բուռն կերպով զարգացել է նաև սպառողական կոոպերացիան։ Ընդգրկելով իր շարքերում յերկրի ազգաբնակչության կեսից ավելին, (141 հազար տնտեսություն) սպառողական կոոպերացիան դուրս է քշել մասնավորին հրապարակից և դարձել է ներկայիս մեր յերկրի ամենաուժեղ տնտեսական-մասսայական կազմակերպություններից մեկը։ Մասնավորապես Հայաստանի սպառկոոպերացիան այս մի քանի տարվա ընթացքում ունեցել է այնպիսի զգալի նվաճումներ, որոնք յերազել անգամ չեն կարողացել դաշնակցական «կառավարիչները» կոոպերացիայի ամբողջ պատմության ընթացքում (1901 թվից մինչև 21 թիվը)։

1922 թվին Հայաստանի կոոպերացիան արդեն վերջացնում է իր ամբողջ նախապատրաստական և վերակազմակերպչական աշխատանքը, որից հետո հնարավորություն է ունենում 1923 թվի մայիս ամսին հրավիրել իր առաջին համագումարը։ Այդ համագումարին մասնակցում են ընդամենը 27 կոոպերատիվների ներկայացուցիչներ։ Առաջին համագումարից հետո ավելի ևս ուժեղանում է կոոպերացիայի աշխատանքը, որը սկսած 1923 թվից առաջ է գնում միանգամայն բացառիկ ուժեղ թափով։ Այդ մասին բերենք մի շարք թվական տվյալներ, կոոպերատիվ աշխատանքների մի քանի հիմնական ասպարեզներից, որոնք հանդիսանում են նրա աճման և հաղթանակների փայլուն ցուցանիշները։

## I. Սպառողական ընկերությունների ցանցը

1923 թվի մայիսին գոյություն ունեյին 27 կոոպերատիվ ընկերություններ, իսկ 1924 թվի հունվարի 1-ին 43 կոոպերատիվներ։ 1929 թվի հուլիսի 1-ին դրանց թիվը հասել է 110-ի.

Աճումը ըստ առանձին տարիների ընթացել է այս կերպ՝

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1924 | թ. | 1 | հունվ. | 43 | ընկերություն. |
| » | » | 1 | հոկտ. | 68 | » |
| 1925 | » | 1 | » | » | » |
| 1926 | » | 1 | » | 81 | » |
| 1927 | » | 1 | » | 90 | » |
| 1928 | » | 1 | » | 96 | » |
| 1929 | » | 1 | հունիս | 110 | » |

Այժմ տեսնենք թե ինչես է աճել կոոպերացիայի առևտրական կետերի թիվը՝

1924 թվի հունվարի 1-ին առևտրական կետերի թիվը ամբողջ ցանցում 60 էր, իսկ ներկա թվի հուլիսի 1-ին այդ թիվը հասել է 652-ի։ Ըստ առանձին տարիների, աճումը կատարվել է հետևյալ ձևով՝

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1924 | թ. | 1 հունվ. | 60 | առևտրական | կետ. |
| 1924 | » | » | հոկտեմ. | 158 | » | » |
| 1925 | » | » | » | 276 | » | » |
| 1926 | » | » | » | 309 | » | » |
| 1927 | » | » | » | 366 | » | » |
| 1918 | » | » | » | 471 | » | » |
| 1929 | » | » | հունիսի | 652 | » | » |



## III. Անդամների թվի աճումը

Կոոպերացիայի զարգացման յերրորդ չափանիշը մենք վերցրել ենք ազգաբնակչության կոոպերացումը.—1924 թվի հունվարի 1-ին սպառկոոպերացիայի անդամների թիվը ամբողջ Հայաստանում 8148 էր, իսկ ներկա թվի հունիսի 1 ին այդ թիվը արդեն հասել էր 140,705 ի։

Աճումն ընթացել է այս կերպ.

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1924 | թ. | 1 | հունվ. | 8148 | անդամ. |
| » | » | 1 | հոկտեմ. | 25,404 | » |
| 1925 | » | » | » | 45,903 | » |
| 1926 | » | » | » | 65,750 | » |
| 1927 | » | » | » | 89,422 | » |
| 1928 | » | » | » | 109,962 | » |
| 1929 | » | » | հունիսի | 140,705 | » |

## IV. Փայադրամագլխի աճումը

Զափազանց հետաքրքիր պատկեր է ներկայացնում սպառողական կոոպերացիայի ֆինանսական միջոցների, նրա փայադրամագլխի աճումը, վորը նյութական հիմքն է կազմում կոոպերացիայի ամբողջ աշխատանքի։ 1924 թվի հունվարի 1-ին փայադրամագլխի գումարն ամբողջ ցանցում հասնում էր ընդամենը 27,728 ռուբլու, իսկ այս տարվա հուլիսի 1-ին այդ գումարը հասել է 1,186,767 ռուբլու։

Աճումը կատարվել է այս կերպ.

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1924 | թ. | 1 | հունվ. | 27,728 | ռուբլի, |
| 1924 | » | » | հոկտեմ. | 66,978 | » |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1925 | » | » | » | 136,854 | » |
| 1926 | » | » | » | 234,925 | » |
| 1927 | » | » | » | 388,672 | » |
| 1928 | » | » | » | 730,731 | » |
| 1929 | » | » | » | 1,186,767 | » |

## V. Ապրանքաշրջանառություն

Ապրանքաշրջանառության ասպարեզում կոոպերացիայի աճումը հետևյալ ձևով է կատարված։ 1923 թվին ամբողջ ցանցի միջին ամսական ապրանքաշրջանառությունը կազմում էր 93,000 ռ., իսկ վերջին 1928-29 տնտ. տարվա միջին ամսական ապրանքաշրջանառությունն արդեն հասել էր 2,958,500 ռուբլու։

Աճումն ընթացել է այս կերպ.

| | | | |
|---|---|---|---|
| 1923 | թ. | 93,000 | ռուբլի, |
| 1924 | » | 410,000 | » |
| 1924-25 | » | 717,700 | » |
| 1925-26 | » | 1,119,200 | » |
| 1926-27 | » | 1,535,800 | » |
| 1627-28 | » | 2,144,000 | » |
| 1928-29 | » | 2,958,500 | » |

## VI. Կուլտուրական աշխատանք

Այս խնդրում պետք է արձանագրել, որ սպառողական կոոպերացիան բավական հետ է մնացել։ Չնայած նրա ընդգրկած հազարավոր մասսաների աճող կուլտուրական կարիքներին, կոոպերացիան չի կարողացել ժամանակին ըստ այդ կարիքների ծավա-



լել իր կուլտ-կենցաղային աշխատանքները։ Այս պատճառով անհրաժեշտ է ընդգծել, որ ներկայումս գոյություն ունի վորոշակի անհամաչափություն կոոպերացիայի տնտեսական ուժեղ վերելքի և դրա դիմաց կուլտուրական աշխատանքների փոքր ծավալի միջև։ 1924-25 թվին սպառ. կոոպերացիայի ամբողջ ցանցը կուլտուրական աշխատանքների վրա ծախսել էր մոտ 5,471 ռուբլի։ 1925-26 թվին 7,816 ռուբլի, 1926-27 թվին 8,400 ռուբլի, 1927 28 թվին 30,134 ռուբլի իսկ 1928 29 թվին 80,291 ռուբլի։

Սպառողական կոոպերացիան ծրագրված ձևով կուլտ-կրթական աշխատանքների անցել է միայն 1928-29 տնտ. տարվանից և միայն այդ թվականին է վոր կուլտ աշխատանքի վրա ծախսված գումարներն ունեցել են իրենց անմիջական արդյունքները, իսկ մինչ այդ, կուլտ-աշխատանքներին հատկացված առանց այն էլ շատ չնչին գումարները ծախսվել են բոլորովին պատահական, վոչ անմիջական իրենց նպատակներին։

1928-29 տնտ. տարում սպառողական կոոպերացիան հիմք դնելով ծրագրված, սիստեմատիկ կուլտ-կրթական աշխատանքի, ունեցել է շատ հիմնական խոշոր նվաճումներ։ Այդպիսի նվաճումները վոչ միայն բնական են, այլև չափազանց անհրաժեշտ այն պարզ պատճառով, վոր սպառողական կոոպերացիան իրեն անմիջական խնդիր է դրել ամենահիմնական և արագ քայլերով առաջ տանել կոոպերատիվ աշխատանքի այդ հետ մնացած ֆրոնտը։ Կուլտ. ֆրոնտը, վորի դանդաղ ընթացքը կարող էր հարվածի տակ դնել կոոպերացիայի տնտեսակ. հետագա աճումը և

ամբողջ նրա հնգամյա պլանը: Կուլտուրական հեղափոխության շրջանում, սպառողական կոոպերացիան իր կուլտ-կենցաղային աշխատանքները պետք է տանել և տանում է կուլտուրական հեղափոխության թափով, մի թափ, վորը համապատասխանում է անպայմանորեն և համապատասխանեցվում է մեր տնտեսության վերակառուցման շրջանի կոոպերատիվ հնգամյա պլանի արագ և լրիվ իրագործման տեմպին:

1928-29 տնտեսական տարում սպառողական կոոպերացիան ունեցել է հետևյալ կուլտ կենցաղային հիմնական ձեռնարկումները:

1) Կոոպերատիվ տեխնիկումում և այլ բարձրագույն կոոպերատիվ ուսումնական հաստատություններում 64 թոշակառու ուսանողներ:

2) Բաց է արել 39 հոգու համար 6 ամսվա հաշվապահական կուրսեր:

3) Կազմակերպել է մշտական գործունեյությամբ «դպրոց-խանութ»՝ Յերևանում, վորը պատրաստում է նոր գործակատարներ սպառկոոպերացիայի ցանցի համար: Անցյալ տարի ավարտել են 36 հոգի, այժմ սովորում են 28 հոգի:

4) Կազմակերպել է 100 ից ավել կոոպխմբակներ:

5) Ունեցել է կարճատև վերապատրաստման կուրսեր կոոպ. նախագահների 64 հոգու համար, հաշվապահների (46 հոգու համար), գործակատարների (144 հոգու համար), կինո մեխանիկների (24 հոգու համար), կոոպ. կազմակերպիչների (30 հոգու համար), Կարմիր Բանակայիններից կուրսեր (65 հոգու համար) և մի շարք այլ կուրսեր, վորոնք գործել են



կոոպերատիվ կուրսերի և կոոպերատիվ ակտիվի պատրաստման և վերապատրաստման համար:

7) Բաց է արել 104 լիկկայան, վորտեղ ընդգրկվել են 2,800 անգրագետ-կիսագրագետներ:

8) Կազմակերպել է սպառկոոպների անդամագրությամբ 14 կինո ռադիո ընկերություններ, վորոնց միջոցով գյուղին տվել է 24 շրջիկ կինո ապարատ (Հայաստանում աշխատող շրջիկ կինոների 80% ից ավելի) և 35 ռադիո ընդունիչներ:

9) Բաց է արել 44 մանկապարտեզային խմբեր՝ 1,320 ի չափ յերեխաներով, 48 մանկահրապարակ՝ 1,500 ի չափ յերեխաներ, 14 մոր-մանկան անկյուններ և այլն:

10 Գիրքը, գրականությունը գյուղին հասցնելու և տեղում նրանց տարածման գործը կազմակերպելու համար բաց է արել 8 գրաքաժիններ և 72 գրադարակներ:

11) Հրատարակել է 22 անուն կոոպերատիվ գրքեր, 12 ուրինակ «Մաճկալ» ին կից թերթիկ կոոպերացիայի առաջ դրված զանազան կարևոր խնդիրներին նվիրված և այլն:

Այս աշխատանքն իհարկե, շատ չնչին է այն ծով պահանջի հանդեպ, վորը կա կուլտուրական աշխատանքների նկատմամբ, բայց դա այն ռեալ և կարևոր աշխատանքն էր, վորը սպառողական կոոպերացիան կարողացավ տանել իր այդ աշխատանքների առաջին տարում և այդ տեսակետից նրա առաջին արդյունքները միանգամայն աչքի ընկնող են, արդյունքներ, վորոնք չի ունեցել կոոպերացիան ամբողջ 9 տարիների ընթացքում:

Կասկածից դուրս է, որ այս աշխատանքն ավելի մեծ ծավալով շարունակվում է և պետք է շարունակվի նաև այս տարի և հետագա տարիներում։

Ահա սպառողական կոոպերացիայի այս 6 եական ցուցանիշները՝ ցանցը, առևտրական կետերը, անդամների թիվը, փայադրամագլուխն ու շրջանառությունը, կուլտ կենցաղային աշխատանքը, որոնց աճման թափը ցույց է տալիս այն վերելքը, որը սպառողական կոոպերացիան ունեցել է Հայաստանի Խորհրդային իշխանության 9 տարիների ընթացքում։

## 3. Հ. Ս. Խ. Հ. ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱԿԸ ՅԵՎ ՆՐԱ ԱՌԱՋԻՆ ՏԱՐՎԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1921 թվից սկսած մեր անընդհատ վերելքը հնարավորություն տվեց 1927 թվին ավարտել յերկրի տնտեսական վերականգնման շրջանը։ Վերևում բերված թվական տվյալներից մենք տեսանք, թե մեր այդ ընդհանուր վերելքին զուգընթաց ինչպես է աճել ու զարգացել նաև սպառողական կոոպերացիան։ Տընտեսության վերականգնման շրջանի այդ հսկայական հաջողությունները մեզ հնարավորություններ ստեղծեցին մեր յերկրի սոցիալիստական շինարարության բոլոր ֆրոնտներում հաղթական առաջխաղացման համար ձեռնարկել ավելի լուրջ, ավելի մեծ և պատմական աշխատանքներ, որոնք պահանջում է ՍԽՀՄ-ի զարգացման, ներկա շրջանը և համապատասխանում է մեր վերջնական նպատակներին՝ սոցիալիստական հասարակարգի կառուցմանը։ Այդ մեծ աշխատանքն է՝ մեր



յերկրի ինդուստրացումը, արդյունաբերության վերակառուցումը և գյուղատնտեսության վերակազմակերպումը սոցիալիստական, կոլլեկտիվ հիմունքներով։ Մեր տնտեսության զարգացման այս շրջանը՝ վերակառուցման շրջանը, սկսվում է հնգամյա աշխատանքների ծրագրով։ Առաջին անգամ է, որ ՍԽՀՄ-ն կազմում է հնգամյա աշխատանքի ծրագիր և անցնում է նրա կիրառմանը։ Մինչև այժմ մենք ունեցել ենք միայն տարեկան պլաններ։ Այս հնգամյա պլանով խոշոր հեղաշրջում է կատարվելու ՍԽՀՄ-ի տնտեսական կյանքում։ Շատ հասկանալի է, որ սպառողական կոոպերացիան որպես մեր յերկրի հիմնական տնտեսական-մասսայական կազմակերպություններից մեկը, գրավել է իր տեղը հնգամյա պլանում։ Տնտեսության հիմնովին վերակառուցման այս աշխատանքներում շատ մեծ անելիքներ ունի սպառողական կոոպերացիան։

Ազգաբնակչության գլխովին կոոպերացումը, (չքավորությանը 1929 30 թվի ընթացքում) կոոպերատիվ առևտրական ցանցի հետագա լայնացումն ու սպառողական մասսաների նյութական կարիքների սպասարկման բարելավումն, առանձնապես բանվորական վայրերին և մեր քաղաքներին կենսական անհրաժեշտ մթերքներով ապահովելը, գյուղատնտեսական մթերքների (նաև հացի) մթերման գործը, գործարանային ապրանքների նկատմամբ կուսակցության կողմից տրված հիմնական դիրեկտիվների անշեղորեն կիրառումը (գների քաղաքականություն և այլն), կուլտ մասսայական աշխատանքների ծավալումը, բանվորական և չքավորական մասսաներին կոոպերատիվ ղեկավար աշխատանքների հետագա առաջ-

քաշումները և այս բոլոր աշխատանքը կատարելով, արդյունաբերության ու գյուղատնտեսության վերակառուցման գործին զարկ տալը, այդ աշխատանքների հաղթանակի ապահովումը—այն խնդիրներն են, վորոնք կազմում են կոոպերատիվ հնգամյակի հիմքը։

Սպառողական կոոպերացիան ծրագրել է այդ բոլոր խնդիրները և արդեն ունի մեկ տարվա (1928 29 թվի) աշխատանքների արդյունքները։ Վո՞րն է այն հիմնական գնահատականը, վորը մենք կարող ենք տալ սպառկոոպերացիայի հնգամյա աշխատանքների ծրագրին։ Իհարկե սրանից 1 2 տարի առաջ, յերբ կազմվում եր այդ ծրագիրը, բնականաբար կարող եր ունենալ իր վորոշ թերությունները, վորոշ բացերն ու սխալները, վոլոնք պետք եր ուղղվեյին և լրացվեյին կյանքի փորձից։ Սակայն Հայաստանի սպառկոոպերացիայի հնգամյա պլանը ունեցել է նաև ուրիշ հիմնական թերություններ։ Ամենաեական բացը, վոր կա, դա այն է, վոր հնգամյակը կազմելիս, լրիվ չափով հաշվի չեն առնվել այն բոլոր հնարավորությունները ու աճման հնարավոր տեմպը, վորը կարող եր ունենալ և ունեցել է սպառողական կոոպերացիան իր զարգացման թափով։ Մեր տնտեսության ընդհանուր հնգամյա պլանի շուրջը թերահավատ, վախկոտ կարծիքներ հայտնող աջ ուկլոնիստները Հայկոոպի հնգամյա ծրագրի առաջին տարվա արդյունքներից պարզ կերպով կարող են տեսնել, թե վորքան են նրանք սխալվում և հետ մընում այն բուռն թափից ու առաջխաղացման սոցիալիստական ուժեղ տեմպից, վորն ունի ՍԽՀՄ-ի բան-



վոր դասակարգը և գյուղացիությունը։ Հայաստանի սպառողական կոոպերացիայի հնգամյա ծրագիրը յեղել է թերի, վորոշ չափով կիսատ այն տեսակետից, վոր մենք շատ ավելին կարող եինք անել, քան յեղել է նախատեսված։ Հայկոոպի վարչությունը քննության առնելով հնգամյա պլանի այդ դրությունը գըտել է, վոր այդպիսին հնարավոր է կիրառել վոչ թե հինգ, այլ $2\frac{1}{2}$ 3 տարում, վորովհետև այդ են ցույց տալիս առաջին տարվա արդյունքները և վորոշել է լրացնել և լայնացնել սպառողական կոոպերացիայի զարգացման հնգամյա պլանը։ Այժմ տեսնենք թե ինչպիսի՞ թվեր ու աճման տեմպ է նախատեսված Հայաստանի սպառկոոպերացիայի հնգամյա պլանում և ինչ է կատարված 1928 29 տնտեսական տարում, վորպես այդ հնգամյակի առաջին տարին։ Այդ նպատակով մենք վերցնում ենք հնգամյա պլանից 7 գլխավոր ասպարեզներ, վորոնց թվերը կազմում են պլանի հիմնական ցուցանիշները։ Աշխատանքների զարգացման աստիճանի մեջ վորոշ համեմատություն գնելու, հնարավորություն տալու նպատակով, վերցնենք այն ասպարեզները, վորոնք մենք վերցրել ենք 1923-28 թվերի աշխատանքի զարգացման տեմպը ցույց տալու համար։

## I. Սպառ. ընկերությունների ցանցը

1928 թվի հոկտեմբերի 1-ին սպառողական ընկերությունների թիվը Հայաստանում կազմում եր 96։ Հընգամյա պլանով նախատեսված է մինչև 1932-33 տնտ. տարում այդ թիվը հասցնել 148-ի (առաջին վար-

Публичная Б...
14944-57

խանութը յեղել է 138սպառկոոպ միություն)։ 1928-29 տնտ տարվա 9 ամիսների ընթացքում, (առ 1 հուլիսի 1929 թվի) Հայաստանում սպառ. ընկերությունների թիվը հասել է 110-ի, իսկ սույն թվի հոկտեմբերի 1-ին՝ 112-ի։ Այսպիսով հնգամյակի ընթացքում նախատեսնված 52 սպառ. ընկերություններից, առաջին տարում կազմակերպվել է 16-ը, այսինքն հնգամյակի թվի 31%-ը, իսկ նրա առաջին վարյանտի մոտ կեսը (հնգամյակով 42, առաջին տարում 16)։ Ի՞նչ կասկած, վոր հնգամյակի համար նախատեսնված 52 սպառկոոպները, մեր աշխատանքների թեկուզ այս տարվա տեմպով, կկազմակերպվեն վոչ թե հինգ, այլ նույնիսկ 3-4 տարում։ Այժմ վերցնենք մեկ ուրիշ ասպարեզ։

## II Սպառկոոպերացիայի առեվտրական կետերի թիվը

1928 թվի հոկտեմբերի 1-ին սպառողական կոոպերացիայի վողջ ցանցում կային 471 առեվտրական կետեր։ Ինը ամիս հետո, 1929 թվի հուլիսի 1 ին առեվտ. կետերի թիվը հասել էր 652-ի, ուրեմն ավելի 181 կետ։ Իսկ 1833 թվի հոկտեմբերի 1-ին համաձայն հնգամյա պլանի, կետերի թիվը նախատեսնված էր 680 (առանձին վարիանտով) և 788 այժմյան պլանով, վորը վորոշել է հայկոոպի վարչությունը։ Դժբախտաբար դեռևս չկան առ 1 հոկտ. 1929 թվի տվյալները, բայց յեթե անգամ վերցնենք հնգամյակի առաջին տարվա միայն 9 ամսվա թվերը, ապա պետք է ասել, վոր 9 ամիսների ընթացքում ավելանալով նոր 181 առեվտրական կետեր, կատարված է հնգամյակի այս կետի մոտ 60%-ը (հնգամյակով նախատեսնված էր 317 նոր առևտաական կետ, 9 ամսում ավելացել՝ է 181 կետ)։

Վերցնենք թվեր մեկ ուրիշ ասպարեզից։

## III. Ազգաբնակչության կոոպերացումը

1928 թվի հոկտեմբերի 1-ին սպառողական ցանցըն ունի 109,962 անդամ։ 9 ամիս հետո, 1929 թվի հուլիսի 1-ին անդամների թիվը արդեն հասել էր 140,705-ի, ուրեմն 9 ամսում ավելացել է 30,743 անդամ։ Համաձայն հնգամյա պլանի, 1933 թվի հոկտեմբերի 1-ին անդամների թիվը հասնելու յէ 197,900-ի (վերջին վարյանտով), այսինքն 5 տարվա ընթացքում կոոպերացիան պետք է ավելացնի իր անդամների թիվը 87,938 անդամով։ Հինգամյակի առաջին տարվա 9 ամիսների ընթացքում ավելացել է 30,744 անդամ։ Սա նշանակում է, վոր 9 ամսում կատարված է հնգամյակի այս կետի մոտ 40%-ը

## IV. Փայադրամագլխի կուտակումը

1928 թվի հոկտեմբերի 1-ին սպառկոոպերացիայի ցանցի փայադրամագլուխը կազմում էր՝ 730,731 ռուբլի։ 9 ամիս հետո 1929 թվի հուլիսի 1-ին այդ թիվը հասել էր արդեն 1,186,767 ռուբլու։ Ուրեմն 9 ամիսների ընթացքում նորից կատարվել է 456,036 ռուբլի։ Այդ թիվը ս. տ. հոկտեմբերի 1-ին իհարկե շատ ավելի մեծ կլինի, վորը և այժմս պարզվում է.

Համաձայն հնգամյա պլանի 1933 թվի հոկտեմբերի 1-ին ցանցի փայադրամագլխի գումարը հասնելու յե 4,798,600 ռուբլու, այսինքն փայադրամագլուխը 1928 թվի հոկտեմբերի 1-ին 730,731 ռուբլուց աճել է ամբողջ 4 միլիոն 68 հազար ռուբլիով։ Հնգամյակի առաջին տարվա 9 ամսում ավելացել է 456,036 ռուբլի վորին վրա յեթե ավելացնենք նաև մնացած 3 ամիսների կուտակումը՝ մոտ 200,000 ռուբլի, կստացվի 656 հազարի չափ մի գումար, վորը կազմում է հնգամյակում ավելանալիք գումարի 20%-ից պակաս, սակայն յեթե աչքի առաջ ունենանք այն, վոր 1928-29 տարին դիֆերենցիալ փայի կիրառման առաջին տարին եր, վորը անցավ գլխավորապես կազմակերպչական աշխատանքներով և իր գլխավոր եֆեկտը տալու յե հետագա տարիներին, ապա պարզ կլինի այն, վոր հնգամյակում նախատեսնված փայակուտակումը միանգամայն ռեալ է և իրագործելի, վորը ցույց է տալիս հնգամյակի առաջին 9 ամիսներում կատարված փայադրամագլխի կուտակման հսկայական %-ը, այսինքն անցյալ մի քանի տարիների ընթացքում կուտակված գումարի 62%-ը։

## V. Ապրանքաշրջանառությունը

1927-28 թվին սպառողական կոոպերացիայի ցանցը կատարել է 25,728,600 ռ. շրջանառություն, վորի միջին ամսական առևտրական շրջանառությունը կազմում է 2,144,050 ռուբլի։ 1928-29 տնտ. տարվա 9 ամսում շրջանառություն կատարվել է 26,626,600 ռուբլի, վորի միջին ամսականը կազմում է 2,958,511



ռուբլի։ Այսինքն 1928-29 տնտ. տարվա միջին ամսում 30% ով ավելի։ Համաձայն հնգամյա պլանի 1932-33 տնտ. տարում շրջանառություն նախատեսնված է (առանց Հայկոոպի) 63,335,000 ռուբլի։ Հայկոոպի համար, վորը 1927-28 տնտ. տարում ունեցել է 18 միլ. չափ շրջանառություն, հնգամյակի վերջին տարվա համար նախատեսնված է 45 միլ. շրջանառություն։ Հայկոոպը հնգամյակի առաջին տարում նախատեսել եր ունենալ 22 միլ. ռուբլու շրջանառություն, փաստորեն ունեցել է 26 միլ., այսինքն նախատեսնվածից ավելի 18%-ով։ Այսպիսով հնգամյակի առաջին տարում թե ցանցը և թե Հայկոոպը գերազանցել են նախատեսնված պլանները, առաջինը 9 ամսում մոտ 5%, իսկ 2 րդ մոտ 18% ով։ Այս թվերն անշուշտ ամենից լավ ապացույց են այն բանի, վոր հնգամյակով նախատեսնված առևտրական շրջանառություն կկատարեն թե Հայկոոպը և թե ցանցը և նույնիսկ մի քանի % ով անպայման կգերազանցեն, վորը հիմք է տալիս ասելու, վոր հնգամյակի այս կետը հնարավոր է իրագործել վոչ թե հինգ, այլ չորս տարում.

## VI Չքավորների յեվ կանանց կոոպերացումը

1929 թվի հուլիսի 1-ին կոոպերացված կանանց թիվը մոտավոր հաշվով կազմում եր 12.000, վորը կազմում է անդամների ընդհանուր թվի միայն 8,5%-ը։ Այս իհարկե չափազանց ցածր % է, վորը հնգամյակի ընթացքում պետք է հասցնի վոչ պակաս 40%-ի։ Այս թիվը միանգամայն հնարավոր է իրագործել այն պարզ պատճառով, վոր առաջիկա տարի-

ների ընթացքում մեր առաջ հարց է տրվում կոոպերացման յենթարկել մեծ թվով ընտանիքի 2 րդ և 3-րդ անդամներին, վորոնց մեջ անշուշտ մեծ % կը կազմեն կանայք։

1929 թվի հուլիսի 1-ին կոոպերացված չքավորների թիվը կազմում եր ընդամենը 16.950 մինչդեռ Հայաստանում կենտվիճվարի տվյալներով, չքավոր ընտանիքներ հաշվում են մոտ 47.800։ Սպառողական կոոպերացիայի ցանցը 1929 թվի հուլիսի 1-ին ուներ չքավորական ֆոնդ սեփական 92.612 ռ., իսկ փոխառու՝ 15.593 ռ. ընդամենը 108.205 ռ., վորից առ 1 հուլիսի 29 թվի ոգտագործված եր 91.131 ռ. հետևապես մնում եր չոգտագործված 17.074 ռ. այստեղից յերկու հանգամանք՝ առաջինը, վոր մինչև սույն թվի հուլիսի 1-ին դեռևս չկոոպերացված չքավորները կազմում են բավական զգալի թիվ (մոտ 30.000 հոգի), վորը մոտ 2 անգամ ավել է քան կոոպերացվածները և 2-րդ, վոր մեր ցանցը բավական խոշոր գումար չքավորական ֆոնդից այս տարի ևս թողել է առանց ոգտագործելու։

Աչքի առաջ ունենալով վերոհիշյալները և այն կարևոր նշանակությունը, վոր ունի չքավորների կոոպերացումը մեր աշխատանքների համար, Հայկոոպի վարչությունը հնգամյա պլանի 2-րդ տարում, այսինքն 1929-30 տնտ. տարվա ընթացքում, նախատեսել է կոոպերացման յենթարկել չքավորությունը 100%-ով։ Այս աշխատանքը միանգամայն հնարավոր է կատարել ընթացիկ տնտ. տարվա ընթացքում, վորովհետև Հայկոոպի կատարած բոլոր ուսումնասիրական աշխատանքները և 1928-29 տնտ. տարվա արդյունք-



ները այդ են մեզ ասում։ Համենայն դեպս, յեթե անգամ հնգամյակի առաջին տարում այս ֆրոնտում, չքավորների կոոպերացման գործում սպառկոոպերացիան չի արել այն բոլորը, ինչ վոր անհրաժեշտ եր, ապա դա մեր աշխատանքի ամենախոշոր բացերից մեկն է, վորը պետք է ուղղվի ամենայն վճռականությամբ և ձեռք առնվեն գործնական միջոցներ, մինչև 1930 թ. հոկտեմբերի 1-ը վոչ մի չքավոր դուրս չթողնել կոոպերացիայի շարքերից։

## VII. Կուլտ կենցաղային ֆոնդերը յեվ նրանց ոգտագործումը

1928 թվի հոկտեմբերի 1 ին սպառկոոպերացիայի ցանցում համաձայն նրանց հաշվեկշիռների մնում եր չոգտագործված կուլտ. ֆոնդի գումարներ 14 031 ռուբլի։ 1927-28 տնտ. տարվա ունեցած ոգուտներից հատկացվել է կուլտ. ֆոնդին 58.321 ռուբլի։ Ուրեմն անցյալ տարվա համար կուլտ. ֆոնդի ընդհանուր գումարը կազմում եր 72.352 ռ.։ 1928-29 տնտ. տարվա 9 ամիսների ընթացքում ծախսվել է կուլտ աշխատանքների վրա 39 499 ռ.։ Այսպիսով 1929 թվի հուլիսի 1-ին, ցանցում մնում եր դեռևս չոգտագործված 32.853 ռ. կուլտ ֆոնդ, վորի մի խոշոր մասը յերևի ոգտագործված կլինի հուլիսից—հոկտեմբեր, 1929 թվի ժամանակամիջոցում։

Հայկոոպի վարչությունը 1928-29 տնտ. տարվա համար նախահաշվով ունեցել է 55 հազար ռուբլի կուլտ ֆոնդ, բայց փաստորեն ծախսվել է մոտ 70 հազար ռուբլի։

Համաձայն հնգամյա պլանի, նախատեսնվում է մինչև 1933 թվի հոկտեմբերի 1-ը ցանցի կուլտ ֆոնդը հասցնել մոտ մեկ միլլիոն ռուբլու, այսինքն տա-

ըեկան ծախսել մոտ 250 հազար ռուբլի (չնա 1928-29 տնտ. տարին) ծախսել կուլտ-կենցա աշխատանքների վրա: Հայկոոպի վարչության կ ֆոնդը ըստ հնգամյա պլանի հասնելու յե մ հազար ռուբլու, այսինքն տարեկան մոտ 140 հ ռուբլի ծախսել կուլտ կենցաղային աշխատանք վրա: Կուլտֆոնդերի աճումը կախված ե Հայկո ցանցի շրջանառության գումարների և ոգ աճումից, վորոնք ինչպես տեսանք վերևում ը թվական տվյալներից, ամեն տարի աճելու յեն կան զգալի թվերով, հետևապես և նույն տեմպ աճելու յեն կուլտֆոնդերը և մեր կուլտ-կեն աշխատանքները:

Ահա Հայաստանի սպառողական կոոպերա զարգացման հնգամյա պլանից բերված մի շար յալներ, վորոնք ցույց են տալիս նրա վերելքի առաջիկա տարիների ընթացքում: Անհրաժեշտ րից հիշել, վոր այդ տեմպը պահպանելը վոչ մի հնարավոր ե, այլև մի շարք նորանոր հնարավո թյուններ կան արագացնելու, ինչպիսիք են նոր յումս կիրառվող սոց. մրցման միջոցը, անընդ արտադրական շաբաթը, աշխ. դիսցիպլինայի բացումը, և վերջապես մեր զարգացող պետական դյունաբերությունը, վորը ամեն տարի ավելացն իր արտադրողականությունը 25, 35, 40 և այլ % վորն իր հերթին հնարավորություն ե տալիս բացիային ավելացնելու իր տարեկան շրջա թյունը և հետևապես իր ամբողջ աշխատանքն ծավալը: Այս բոլորը գալիս են մեզ ասելու, վոր ռողական կոոպերացիան իր հնգամյա պլանի իր գործման խնդրում միանգամայն ապահովված ե նր հաղթանակով, վորը և մեծ զարկ կտա սոցիալիս կան շինարարության ընդհանուր խնդիրներին:

Այս խոսը համոզմունքով, մենք թեակոխել են հաղթական հնգամյակի 2-րդ տարին և կթեակոխե Հայաստանի խորհրդայնացման 10-րդ տարվա շեմքը

---

Պուբլիչնայա Բիբլիոտեկա (library stamp)
ՀՀ Ազգային գրադարան
NL0204323